ԹԱՂՄԱՆ ՀԱՆԴԻՍԸ

Թաղման նախընթաց երկու օրերը հոգեհանգիստ կատարուեցաւ հանգուցեալի տանը, Բեհբուդեան փողոցում, ուր բերուած էր վաղաժամ մեռած գործչի դին Բաթումից, այնպիսի խուռն բազմութեան ներկայութեամբ, որ մեծ մասը ստիպուած եղան փողոցում մնալ կարգը կատարելու ժամանակ։

Ամսոյս 20-ի առաւօտեան դեռ 8 ժամից սկսած հանգուցեալի տանը և Բեհբուդեան փողոցում սկսան խռնուել երկու սեռի և ամեն հասակի մեծ բազմութիւն. 10 ժամին արդէն յուղարկաւորութեան ներկայ էին բոլոր պատգամաւորները, Թիֆլիս գտնուած բոլոր վարդապետները, Ներսիսեան դպրոցի հոգաբարձական, ուսուցչական խմբերը, երգեցիկ խումբը, բարձր դասատան աշակերտները և բոլոր Ծառայողներ, տղայոց II գիմնազիայի աշակերտները, գրեթէ ամբողջ հոգևորական դասը (բացի մի երկուսից), Ցովնանեան դպրոցի հոգաբարձութիւնը, ուսուցչական խումբը և աշակերտուհիները, «Փորձ»-ի և «Արձագանք»-ի աշխատակիցները, փոխադարձ վարկի ընկերութեան ամբողջ պէրսոնալը, քաղաքագլուխն և իրաւասուները, բոլոր բանկային հաստատութեանց ներկայացուցիչները. Թիֆլիսի բոլոր հայ և վրացի խմբագիրները (բացի Մշակից և Մուրճից), Թիֆլիսի բոլոր հայ գրագէտները և անհամար բազմութիւն։

Ցուղարկաւորութեան հանդիսագիրը և պատարագիչն էր գեր. տ. Գարեգին եպս. Սաթունեանցը։

Երբ հանգուցեալի դին դուրս բերուեց փողոց, դագաղին դիմաւորեց Յովնանեան դպրոցի խումբը և կրօնուսոյց Հ. Արսէն ա. ք. Բագրատունին խօսեց մի սրտառուչ դամբանական դպրոցի կողմից։ Այնուհետև հանդէսն ընթացաւ Վելեամինեան փողոցով, Երևանեան հրապարակով, ուր հանգիստ դրուեց փոխադարձ վարկի ընկերութեան տան առաջ, ապա Լօռու-Մելիքեան փողոցով իջեցրին Ներսիսեան դպրոցով, որի առաջ նոյնպէս հանգիստ դրուեց։

Օդը քաղցր էր և գարնային, Վանքի բակը չը-տեղաւորեց այն բոլոր ժողովրդին, որ լցուել էր ամեն կողմից հանգուցեալին վերջին յարգանքը տալու համար. 4 դիակառքեր զարդարում էին հանգուցեալի արժանիքը դրուատող բազմերանգ պսակները, որոնց թիւը 65 էր, հինգն արծաթեայ։

Ս. պատարագին երգում էր Ներսիսեան դպրոցի քառաձայն խումբը, որ շատ երկար տևեց։ Հայր մերի ժամանակ բեմ բարձրանալով Երևանի թեմական Հ. Կարապետ վարդապետը, մի շատ ազդու ճառ խօսեց Աբգար Յովհաննիսեանի գործունէութեան մասին։ Պատարագից յետոյ խօսեց նոյնպէս Երևանի թեմական դպրոցի տեսուչ Հ. Գարեգին վարդապետը, դրուատելով հանգուցեալի բազմակողմանի արժանիքը։

2 ժամն էր, եղանակը սկսուեց փոխուել, երկինքը արձագանգ տուաւ հայ ժողովրդի վշտապատ զգացմունքներին և յորդ անձրևը արգելեց մի առժամանակ հանգուցեալի դին դուրս բերել եկեղեցուց, ուր սկսան գերեզմանի կարգը կատարել. սակայն 3 ժամին արդէն, երբ անձրևը կտրելու յոյս չկար տակաւին, յուղարկաւորութիւնը ուղղուեց դէպի Վանքի գաւթի հարաւ-արևելեան կողմը, ուր Ազգիս Վեհաստիճան Քահանայապետի հրամանով փորուած էր յաւիտենական

հանգիստը, ուր և ամփոփուեցաւ նորա երկրաւոր մնացորդները։

Մինչև թաղման օրը հանգուցեալի ընտանիքի անունով ստացուած էին զանազան կողմերից աւելի քան եօթանասուն ցաւակցական հեռագիրներ, իսկ «Լումայի» խմբագրութեան անունով ստացուեցան վշտի և ցաւակցութեան 14 հեռագիրներ հետևեալ տեղերից.

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Հայ հասարակութիւնից, Նոր-Նախ. Հայոց Բարեգործական Ընկերութիւնից և նոյնտեղի Հայ Երիտասարդութիւնից, որոնք խնդրել էին մեզ պատգամաւոր լինել հանգուցեալի թաղման և պսակներ դնել իրանց կողմից։

ԲԱԳՈՒԻ գիմնազիոնի Հայ Աշակերտներից.

ՆՈՒԽՈՒԱՑ փոխանորդ տ. Սիօն վարդապետից.

ՆՈՒԽՈՒԱՑ Հայ Երիտասարդութիւնից, տ. Ասրեանի կարուձևի դպրոցի Հայ Աշակերտուհիներից, Ուսանողներից, Քահանաներից, Հայ Տիկիններից, Հայ Օրիորդներից։

ՇԱՄԱԽՈՒ Հայ Հասարակութիւնից.

ԲԱԳՈՒ. Մկրտիչ Բարխուդարեանից՝ Հայ գրագէտների կողմից, և

Հ. ՆԱԽԻՋԵՒԱՆ. Արշակ Եդիգարից։

Ստացուած հեռագիրներից նշանաւորները առաջ ենք բերում այստեղ.

Ն. Կ. Բ. Մեծ իշխան ՆԻԿՕԼԱՅ ՄԻԽԱՅԼՈՎՉԻ հեռագիրը Փարիզից.

Բժիշկ Աւթանդիլեանցին

Հէնց նոր իմացայ Աբգար Արտեմիչի մահը. խնդրեմ յայտնել նորա ամբողջ ընտանիքին իմ ամենասրտագին ցաւակցութիւնը։ ՆԻԿՕԼԱՅ

Ազգիս Վեհափառ Հայրապետի կողմից հեռագրում է Ե. վ. Մուրատեանը՝ հանգուցեալի որդուն.

Նորին Սրբութիւնը հանդիսաւոր հոգեհանգիստ կատարելով Ս. Էջմիածնի նախաթոռ Մայրավանքում՝ օրհնում է Ձեր հանգուցեալ հօր յիշատակը՝ մաղթելով առ Բարձրեալն մխիթարել Ձեր վշտակիր ընտանիքը։

—

ԲԷՐԱՑԻՑ՝ Կ. Պոլսի Ամեն. Պատրիարք Տ. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը հեռագրել է Թիֆլիսի Հայոց Առաջնորդարանին.

Ողբում ենք հռչակաւոր հրապարակագիր, գրականութեան պաշտպան, վաճառականութեան նեցուկ և հայերի պարծանք Աբգար Յովհաննիսեանի մահը։ Յայտնեցէք մեր վշտակցութիւնը իւր ընտանիքին։

Մաղաքիա Պատրիարք.